ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐԸ Տ. ՕԼԳԵՆԻՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ

1912 թ. վերջին – 1913 թ. սկզբին Անդրկովկաս է ժամանում «Новое время», *ապա Պետերբուրգի* «Биржевые ведомости» *թերթի թղթակից, հայտնի հրապարակախոս Անտուան-Բերեզովսկի-Օլգինսկին (կեղծանունը՝ Տ. Օլգենին): Նա Թիֆլիսում (հունվարի 3) և Էջմիածնում (հունվարի 23) դասախոսություններ է կարդում Բալկանյան պատերազմի մասին, որտեղ չոչափում է նաև Հայկական հարցը, նշելով, որ այն «դառնում է հերթական քաղաքական մի խնդիր, որը Բալկանյան լուծված հարցերից հետո պետք է պահանջի իր լուծումը»[1]: Այնուհետև ռուս հրապարակախոսը մեկնում է Արևմտյան Հայաստան՝ լինում Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Տիգրանակերտում, Սեբաստիայում և Խարբերդում: Շուրջ չորս ամիս շրջագայելով հայաշատ և հայաթափ այս վայրերում, Տ. Օլգենինը ուսումնասիրում է արևմտահայության սոցիալական, տնտեսական ու քաղաքական գոյավիճակը և այդ ամենի մասին սպառիչ տեղեկություններ հաղորդում իր թերթին մի շարք հոդվածներով՝ «Անհետացող Հայաստանը» ընդհանուր խորագրով: Շուտով թուրքական իշխանությունները, լրջորեն անհանգստացած Օլգենինի ծավալած գործունեությունից, նրան մեղադրում են հակաթուրքական պրոպագանդայի մեջ և առաջարկում հեռանալ երկրից: Վերադառնալով Արևմտյան Հայաստանից, ռուս հրապարակախոսը Թիֆլիսում (մայիսի 27) և Բաքվում (հունիսի 8) դասախոսություններ է կարդում «Անհետացող Հայաստան» վերնագրով[2]:*

«Биржевые ведомости» *թերթում տպագրված Տ. Օլգենինի հոդվածներն ու թղթակցությունները արագորեն թարգմանվել են հայերեն և հրապարակվել ժամանակի մամուլում կամ էլ դրանց մասին տպագրվել են ծավալուն հաղորդումներ: Գրված լինելով տեսածի և ապրածի անմիջական տպավորության տակ, դրանք ունեն պատմական վավերագրերի արժեք:*

Ստորև հաջորդաբար տպագրում ենք Տ. Օլգենինի «Անհետացող Հայաստանը» հոդվածաշարից երեք հատված, որոնք զետեղված են «Մշակի» 1913 թ. մարտի 14-ի, 23-ի և ապրիլի 18-ի համարներում:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԴԱՄՈԿԼՅԱՆ ՍՐԻ ՏԱԿ

«Դամոկլյան սրի տակ»: Թող այս վերնագիրը չթվա ընթերցողին հավակնոտ, հանված բուլվարային ռոմանների էջերից: Ես, ոչ մի բան չավելացնելով իմ կողմից, խուսս տալով գեղեցիկ ֆրազներից և խոսքերից, ֆոտոգրաֆիական ճշտությամբ կհաղորդեմ այն, ինչ որ կատարվում է այս բոսլեիս մեր կովկասյան սահմանագծի երկարությամբ ընկած երկրում:

---

1 *«Մշակ», 6 հունվարի 1913:*

2 *Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում Տ. Օլգենինի ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Ռուս հրապարակախոս Տ. Օլգենինը Հայաստանի և Հայկական հարցի մասին» («Պատմա-բանասիրական հանդես», 1989, N 4, էջ 67-84):*

Այն փաստերը, որ ես առաջ կբերեմ, մեր ժամանակում կարծես թե կարող էին պատմվել միայն բուլվարային ռոմանների մեջ: Բայց, ավա՛ղ, ամոթ մարդկության, նրանք իրական փաստեր են ժամանակակից Թուրքիայում:

Անցյալ տարվա դեկտեմբերի 12-ի մոտերը Կարաքիլիսե քաղաքում, որ 4 ժամվա ճանապարհ է ռուսական սահմանից (առևտրական քաղաք 200 տուն բնակչով), մուսուլման - գլխավորապես քուրդ - ազգաբնակության մեջ սկսեց նկատվել սաստիկ գրգռումն. ամեն տեղ ժողովներ էին կազմում և հայտնի համարձակ խոսում «հայերին կոտորելու» անհրաժեշտության մասին: Ոմն չեյխ Համզա՝ բազարներում և փողոցներում կրքոտ քարոզներ էր խոսում, ապացուցանելով, որ այդպիսի արարքը հաճո կլինի Աստծուն: Այդ ագիտացիայի մեջ եռանդուն մասնակցություն ունեցավ և տեղական կադրն, որ հանդիսացավ ամբողջ գործի կազմակերպիչ: Նրա ցուցմունքով (ցուցումով - Ա. Զ.)՝ մուսուլմաններն սկսեցին զենք բերել և թաքցնել սրճարաններում ու բազարներում: Ջարդի ենթադրյալ օրը շատ դաղտնի էր պահվում, բայց պատրաստությունները չէին կարող չնկատվել հայերի կողմից, որոնք անմիջապես վազեցին տեղական կայմակամի մոտ, որ ստիպվեց միջոցներ ձեռք առնել և ուղարկեց ժանդարմներին՝ խուզարկություն կատարելու:

Եվ, ճշմարիտ, շատ տեղերում զենք գտնվեց: Խուզարկության ժամանակ ժանդարմները ձերբակալեցին 8 մարդ, որոնց, սակայն, կայմակամն իսկույն արձակեց: Եվ երբ սկսվեց ֆիկտիվ քննություն, հիշյալ կադրն հայտնեց, թե մուսուլմանները զենքը պատրաստել էին նրա համար, որ Ռուսաստանը վերջերս ամբողջովին զինել է հայերին, և սրանք պատրաստվում են ապստամբության: Այս հայտարարությունը վայրկենապես փոխեց ամբողջ պատկերը, և հայերը մեղադրողներից դարձան մեղադրվողներ: Սկսվեցին նոր խուզարկություններ, այս անդամ հայերի տներում, հանդերձ ձերբակալություններով, անասելի ծաղրանքներով, գանակոծություններով և կողոպտումներով: Տանջված ժողովուրդը հանձնարարեց իր քահանային եռանդուն բողոք հայտնել վարչությանը՝ այդ խժդժությունների դեմ: Առաջնորդական փոխանորդ քահանան գնաց կայմակամի մոտ և հազիվ սկսեց հայտնել իր բողոքը, որ կայմակամը ընդհատեց նրան ասելով. «Հերիք է, քեշիշ, հիմարություններ խոսել: Ավելի լավ է՝ դու ինձ ասես – որովհետև ես մոռացել եմ – թե որ թվին է ծնվել ձեր Հիսուս-Քրիստոսը»:

Մի քանի ուրիշ փաստեր. անցյալ տարվա գարնանից մինչև այսօր քաղաքի հայ ժողովուրդը գրեթե ամեն օր ենթարկվում է հայտնապես կողոպուտների և ավարառությունների, որոնք կատարվում են քուրդ հրոսակների ձեռքով, ոմն Շավելիի գլխավորությամբ: Նորերս, երբ ժանդարմները բռնեցին Շավելիին հանցանք գործելիս և կալանավորեցին, նա չուտով արձակվեց 25 լիրա կաշառք տալով: Ամենալիրը և ամենավրդովեցուցիչ կողոպուտների և բռնությունների անթիվ ցուցակից ես առաջ կբերեմ միայն երկուսը, որովհետև նրանք կատարվել են ռուսահպատակների վրա:

1912 թ. հուլիսին: Կաղզվանցի ռուսահպատակ Ահմեդ աղային մոտենում է բազարում քուրդական չեյխ Ղասրմը, խլում նրա գլխից գգակը և ձգելով ցեխի մեջ՝ սկսում է տրորել ոտներով, ամենալիրը ածականներով հայհոյելով, ի մեծ հավանություն ամբոխի, Ռուսաստանի և նրա Թագավորի անունները: Կ. Պոլսի մեր դեսպանատունը չգիտենք ինչու տեսավ դրա մեջ անձնական վիրավորանք, հասցրած Ահմեդ աղային, և պահանջեց դոհացումն նրա համար: Ի տեղեկություն դեսպանատան հաղորդում եմ, որ վերջինը չստացավ այդ գոհացումը:

1912 թ. օգոստոսին: Հայտնի քուրդ ավազակ Շալբանդ Շիկո լույս ցերեկով ծեծեց և հետո կողոպտեց բազարում ռուսահպատակ Խումեդ-Զիգումանին: Հանցանքը մնաց անպատիժ:

1912 թ. սեպտեմբերին: Մեջիդ-Քեազիմ քուրդը փորձեց, գարձյալ որը ցերեկով, կոտրել ռուսահայ Կարապետի խանութը: Երբ վերջինս կամեցավ դիմադրել, ամբոխը ծեծեց նրան և, սպառնալով սպանել, ժանդարմների ներկայությամբ. ստիպեց թքել խաչի վրա և հայհոյել Հիսուս Քրիստոսին և ռուսաց Ցարին:

Ինձ կարող են հարցնել, թե ինչու ռուս հյուպատոսները չեն միջամտում այդ խժդժությունների առիթով և չեն բողոքում: Որովհետև, առաջին, մինչև մերձավոր հյուպատոսարանները՝ Էրզրումի և Բայազիդի՝ շատ հեռու է. երկրորդ, շատ քչերը կհամարձակվեն դնալ դանդատվել:

Այժմ ես առաջ կբերեմ մի քանի թվեր ե տվյալներ կանանց առևանգման մասին, համոզելու համար այն թերահավատներին, որոնք կասկածում են, թե մեր օրերում, այն ևս «սահմանադրական»* պետության մեջ հնարավոր են այդպիսի փաստեր:

1912 թ. օգոստոսի 9-ին՝ քուրդերը առևանգեցին զինվոր գնացած հայ Շահինյանի կնոջը և տարան իրանց դյուղը՝ Այդտեղ նրան պահեցին տասներկու օր, և դյուղի բոլոր տղամարդիկ բռնաբարեցին նրան: Քահանան դանդատվեց, իշխանությունը կնոջը վերադարձրեց, բայց քուրդերը նորից փորձեցին առևանգել նրան:

Սեպտեմբերի 16-ին Մանկասար գյուղում, որ Կարաքիլիսեի արվարձանն է կազմում, հայ Սարգիս Խաչատրյանը, իր կնոջ հետ աշխատանքի գնալով, փակեց իր տան մեջ իր 12 տարեկան աղջկան: Այդ դյուղի աղա քուրդը, օգտվելով հոր բացակայությունից, ծակեց տան կտուրը, ներս իջեցրեց իր որդուն, որը բռնաբարեց աղջկան, որից հետո նրան տարան իրանց տունը, հայտնելով, որ նա այժմ մուսուլմանուհի է դարձել:

Այդ դեպքերը տեղի ունեցան ոչ թե խուլ անկյուններում, ուր չկա ոչ վարչություն և ոչ էլ դատարան, այլ համեմատաբար մի մեծ քաղաքում, բոլոր քաղաքացիական ու զինվորական իշխանությունների աչքի առաջ:

Ինչո՞վ բացատրել առևանգությունների այդ բազմաթիվ դեպքերը: Մասամբ, իհարկե, տեղական հայ աղջիկների ու կանանց գեղեցկությամբ, մասամբ և մուսուլմանական ֆանատիկոսությամբ, որ պատվիրում է դարձնել իսլամության՝ որքան կարելի է շատ անհավատներ:

Այդպես են փաստերը: Նրանք լիակատար չէին լինի, եթե ես չլրացնեի նրանց նորագույն դեպքերով, որոնք ոչ միայն ես ստուգեցի, այլ նրանք նույնիսկ իմ աչքի առաջ տեղի ունեցան: Ես խոսում եմ նոր պոգրոմային ագիտացիայի մասին, որ կատարվում է քուրդերի մեջ՝ այս փետրվարից սկսած, երբ հայտնի եղան վերջին դեպքերը Բալկաններում: Փետրվարի 5-ին կամ 6-ին տեղի ունեցավ գաղտնի խորհրդակցություն ամենաականավոր քուրդ շեյխերի նախագահությամբ և, ինչպես ասում են, նախաձեռնությամբ հայտնի Հուսեին փաշայի:

Այդ խորհրդակցությունը գումարվեց Ալիբեգի տանը, որ Ադեմանլի աշիրեթի հզոր ցեղապետն է: Թե ինչ խոսվեց և վճռվեց այդ ժողովում, ճիշտ հայտնի չէ: Բայց այդ մասին կարելի է ենթադրել լսելով քուրդ ամբոխի զրույցները: Իսկ այդ ամբոխը սաստիկ դրդռված է: Բազարներում, սրճարաններում ու մզկիթներում խոսում են համառ ե կրքոտ. «Միևնույն է, մեր երկիրը, վաղ թե անագան, դառնալու է ռուսական. ուրեմն երբ ռուսները դան այստեղ, թող գտնեն զուտ մուսուլմաններ...»:

Այս բոպեին, երբ վերջացնում եմ այս նամակը, ինձ մոտ մտավ Վանից փախած մի քահանա, որ պատմեց, թե Վանի և Բիթլիսի վիլայեթ-

---

*Ես այս խոսքը առա չակերտների մեջ նրա համար, որ Թուրքերը մեր սահմանակից շրջաններում սաստիկ պրոպագանդ են մղում Ռուսաստանի դեմ՝ ջանալով ամեն կերպ ստորացնել նրան: Նրանք քարոզում են, թե Ռուսաստանը բարբարոս երկիր է, և նրան անծանոթ են ժամանակակից քաղաքական բարիքները և ազատությունները, մինչդեռ Թուրքիան սահմանադրական կայսրություն է:

ներում ամեն բոպե սպասվում են կոտորածներ: Ես չեմ կարող շուտով հասնել Վան, ինչպես կկամենայի, ճանապարհների վատության պատճառով: Ուստի դեպքերը կարող են կանխել ինձ: Բայց եթե այդ չպատահի էլ, այնուամենայնիվ այժմ ինձ հասած լուրն ասում է, թե այն գրգռումը, որի մասին ես ամբողջ ժամանակ խոսում եմ, և զրույցները կոտորածի մասին չեն սահմանափակվելու միայն Հյուսիսային Քուրդիստանով, այլ տարածվելու են նաև հարավում: Որտեղի՞ց և ինչպե՞ս օգնություն կհասնի այն ժողովուրդին, որին սպառնում է այնպիսի կոտորած, որից կդողա ամբողջ աշխարհը:

Ա Ն Հ Ո Ւ Յ Ս Ե Վ Ա Ն Լ Ո Ւ Յ Ս

Ձյունի ծովով.— 80 տան փոխարեն 20-ը.— «Քրիստոնյա օները».— Բեկի ցուցմունքը.— Սարսափը Ռուսաստանի առջև.— Ժամանակ է օգնելու:

Պատնոց, 11 փետրվարի

... Մենք չենք գնում, այլ «լողում ենք» ձյունի ծովով: Լողում ենք, ինչպես որ լողում են իսկական ծովում, ուր չկան ոչ հետքերի տեղեր, ոչ ճանապարհորդներ, ոչ կամուրջներ, ոչ վերստերի կամ հեռագրական սյուներ, այլ կա միայն ուղղություն, որը ցույց է տալիս կողմնացույցը: Իմ նավը — ցածրիկ, նեղ կառք, ռողվալնի, լծված մի զույգ ուժեղ ու դիմացկուն ձիերի իր բազմօրյա ճանապարհին (Բայազիդից դուրս գալուց 10 օր հետո) — ղեկավարվում է նույնիսկ ոչ թե կողմնացույցով, այլ մի ինչոր ինձ համար բոլորովին անհասկանալի բնազդով: Ուշադրությամբ նայելով հարթ ու ողորկ ձյունի ծածկոցին, նա, Մայն-Ռիդի վեպերի մեջ պատկերված հնդկացու նման կամ թե ինչպես Քուրդիստանի Շորլոկ-Հոլմսը, որսում է նրանում մի քանի օր առաջ այդտեղից անցած ուղտերի կարավանների «հետքերը», որոնք անտեսանելի էին իմ աչքի համար, և ահա այդ հետքերով էլ մենք լողում ենք, օրեցօր թաղվելով ձյունի ահագին հյուսերի մեջ, երբեմն անսպասելի կերպով ցած ընկնելով, և հաճախ բազմաթիվ լեռնային վտակների՝ արևից հալված նուրբ սառցաքողի միջից, երբեմն էլ ոլորապտույտ բարձրանալով սառած խիտ ու ամուր, ինչպես գրանիտ, ձյունի վրայով գլուխ պտտեցնող բարձրության վրա: ... Ինձ ուղեկցող, ոչ այն է իբրև պահակ, ոչ այն է իբրև լրտես, ժանդարմը, նկատելով առջևում հազիվ նշմարելի սև կետ, հեռվից արդեն սկսում է սպառնաբար բղավել, հրամայել ճանապարհից դուրս գալ: ...

Ահագին դժվարությամբ կտրելով Քիլիչ-Գեդյուկի բարձրությունը (բարձրանալն ու իջնելը տևեց մոտ 8 ժամ), մենք իջնում ենք այն բարձրավանդակը, որտեղից հոսում է Եփրատի արևելյան ճյուղը՝ աղմկահույզ և սրընթաց Մուրադը:

Երբեմնի այս տեղը Հայաստանի կենտրոնավայրն էր. այժմ դանդաղորեն, բայց անընդհատ անհետացող Հայաստանն է: Բազմաթիվ ծաղկեալ հայ գյուղերից այժմ մնացել են միայն գերեզմաններ, մյուսներում հայերը մի քանի տասնյակ տներով քարշ են տալիս իրանց ողորմելի ու կիսաքաղց գոյությունը:

* * *

Քեոչկե գյուղում, որտեղ անգլիացի հայտնի ճանապարհորդ և աշխարհագրող Լինչ դեռ 1894 թվին հաշվել էր 80 տուն, այժմս ես գտա ընդամենը քսանը միայն: Օգուտ քաղելով նրանից, որ իմ կառավարը կանդ առավ այստեղ ձիերը կերակրելու համար, ես խոսեցի այդ անչափ դժբախտ մարդկանցից մի քանիսի հետ: Նրանց կյանքը - դա մի սարսա-

փելի մղձավանջ է. սրանից երկու տարի առաջ տեղական քուրդերը (համազգուղացիները) ուժով խլեցին նրանցից նրանց հողերի համարյա երկուերրորդ մասը. բոլոր գանդատները, բոլոր դիմումները թուրքաց ադմինիստրացիային այն արդյունքը տվեցին, որ քուրդերը հայտնեցին, թե բոլոր հայերը կմորթոտվեն, եթե չխաղաղվեն: 1909 թվից սկսած նրանք դիմումներ են անում, որպեսզի իրանց թույլատրվի չինել մի փոքրիկ եկեղեցի կամ մատուռ, որը կարողանար ծառայել նաև շրջակայքի բոլոր գյուղերի հայերին, բայց թուրք իշխանությունը կոպտաբար մերժում է նրանց մնացած այդ միակ մխիթարությունն էլ: Հունվար ամսին Քեռչկե գյուղից դեպի Խորբասար գյուղը տանող ճանապարհի վրա քուրդերը սպանեցին սի հայի. էրզրումից բժշկական քննություն կատարելու համար դեպքի տեղն եկավ թուրքական մի բժիշկ, որը նրա վրա գտավ կոկորդից մինչև ծոծրակը ճեղքված վերք և այն եզրակացության եկավ, որ «մեռածը, ըստ երևույթին, ինքն է ընկել մի ինչ-որ սուր առարկայի վրա»:

Վերջին ժամանակներս տեղական հայ արական ազգաբնակության մեծ մասը (քուրդերին ձեռք չէին տալիս) տարել են գինվոր. մի պառավ մայր, դառնությամբ լալով, պատմում էր ինձ, որ ահա մի քանի ամիս է լինում արդեն, ինչ նա ոչ մի լուր չունի իր երկու որդիների մասին, որոնք պատերազմի դաշտումն են նրա սկսվելուց մինչև այժմ. մոտ ժամանակներս նա անկարող լինելով դսպել իր վիշտն ու անհանգստությունը՝ իրան ձգեց Տուտախ քաղաքը, տեղական կայմակամին խնդրելու տեղեկություններ հավաքել իր որդիների մասին, և նա նրա արտասուքներին ու աղերսանքներին իբրև պատասխան դուրս վռնդեց, ասելով. «Պառավ, միթե քիչ շներ են ձեր գյուղում վազվզում, որ դու գալիս ես ինձ անհանգստացնելու, պատմելով ինչ-որ ս...՛.»:

Պարոնայք եվրոպական մարդասերներ, և դուք, պարոնայք դիվանագետներ, գիտեք արդյոք, որ այդպես խոսում են XX դարում թուրքական պաշտոնյաները, և խոսում են մի ժողովուրդի հետ, որը մեղավոր է նրանց առջև մի բանում միայն, այն է, որ նրա որդիներն էլ նույնպիսի քրիստոնյաներ են, ինչպիսին համարվում եք և դուք...

* * *

Թե Քեռչկեում և թե Տուտախ քաղաքում, որը այդ շրջանի վարչական կենտրոնատեղին է, ես նորից առիթ ունեցա ցուցմունքներ լսելու, որ քուրդերի մեջ աճում է խուլ հուզմունքը. կազմակերպված ու պատրաստվող ջարդերի մասին տարածված լուրերը տիրում են այստեղ ևս: Շատ զգույշ ու մի փոքր խուսափողական ձևով վկայեց այդ փաստը մահմեդական-մուհաջիրների (Ռուսաստանից գաղթած մահմեդականներ) շրջանում մի շատ ազդեցիկ անձնավորություն՝ Կարամանլը-բեկ, որ քուրդերից նորերս կազմված համիդիե գնդի հրամանատարի պաշտոնը վարելով մի տեսակ նրանց պաշտոնական պետն էլ է համարվում: Զնայելով իր բոլոր զսպված ու զգույշ վերաբերմունքին, նա անկարող եղավ թաքցնել իր կսկիծը, երբ խոսում էր այն երկրի մասին, որ գաղթել-բնակվել էին իր ցեղակիցները:

«Նրանք կարծում էին, թե կհանդիպեն այստեղ մորը, բայց հանդիպեցին խորթ մոր»:

«Ժողովուրդը մեռնում է զանազան հիվանդություններից. Տուտախի կայմակամության մեջ գտնվող 62 գյուղեր չունեն մի հատիկ բժիշկ, ոչ մի հիվանդանոց, դպրոցների փոխարեն կիսավեր շենքեր կան նրանց համար, ճանապարհների հաղորդակցություն բնավին, անաչառություն և արդարադատություն՝ նույնպես: Հասարակ, աղքատ ժողովուրդը, քուրդերն ու մուհաջիրները, նույնպես տառապում են հարևան քուրդերի անպատիժ կամայականություններից, թալաններից ու բռնություններից,

ինչպես և հայերը»: Նկատի ունեցեք, այդ ասողը քրիստոնյա չէր, այլ մահմեդական, բեկ, ինքն էլ թուրքական ծառայության մեջ գտնվող աղդեցիկ մի օֆիցեր...

Հայերի նման Կարամանլը-բեկն էլ այն կարծիքն է հայտնում, որ միայն ռուսաց միջամտության երկյուղը, կույր սարսափը Ռուսաստանի առաջ զսպում է քուրդերի շահատակությունները հայտնի սահմաններում. եթե այդ սարսափը չլիներ, հայ ազգաբնակության այն խղճուկ մնացորդները, որոնք դեռևս կան երկրում, վաղուց արդեն բնաջինջ եղած կլինեին երկրիս վրայից,- մի խոստովանություն, որը ես առիթ ունեցա լսելու իմ անցած ամբողջ ճանապարհին նաև քուրդերից, որոնք, չգիտեմ ինչու, խորապես համոզված էին, որ շատ մոտիկ ապագայում այդ ամբողջ երկիրը անցնելու է ռուսների ձեռքը:

Այդ հողի վրա, աղերիս գրողի հետ Տուտախ քաղաքում պատահեց հետևյալ փոքր ինչ անեկդոտանման դեպքը. անցնելով «չարչրյով» (բազար), ես պատահաբար նկատեցի զարմանալի պատկերավոր մի կերպարանք քուրդ-համիդիեի և լուսանկարեցի նրան: Մի քանի ժամանակից հետո անսպասելի կերպով այն իջևանատեղին եկավ իմ լուսանկարած քուրդը, ուր ես իջևանել էի, և մտնելով սենյակս սկսեց սաստիկ խնդրել ինձ, «որպեսզի ներեմ նրան»:

Ես երկար ժամանակ չէի կարողանում իմանալ նրանից բանի էությունը, իսկ երբ իմացա, չկարողացա ծիծաղս պահել. բանից դուրս է գալիս, որ այդ խեղճ, միամիտ քուրդը երևակայել է, որ ես իմացել եմ, թե «նա շատ վատ և չար մարդ է, և նրա լուսանկարը վերցրել եմ, որպեսզի, երբ այստեղ գալու լինեն ռուսները, արտաքսել տամ նրան»:

Այս պատմածս հնարովի բան չէ, այլ փաստ: Այդ համոզմունքը կազմելու մեջ, թե «այստեղ» պետք է դան ռուսները, մեղավոր են թերևս հենց իրանք թուրքերը, ավելի ճիշտ կլինի ասել՝ երիտասարդ թուրքերը, որոնք այդ տեսակ լուր տարածելով կամենում են արդարացնել համիդիե դնդերի նոր գործակոչը: Ռուս-թուրքական սահմանագլխի ամբողջ մոտերքում, նույնպես և Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթների ներքին վիճակներում, ինչպես ինձ վիճակվեց ամեն կողմից լսել, թուրքերը մեծ եռանդով կազմակերպում են համիդիե գնդերը, որոնք ոչ միայն բոլորովին նոր ձևի հագուստներ են ընդունում, այլև զինվում են նոր տեսակի զենքերով ու ստանում են նոր կազմակերպություն:

«Թփից վախեցած աղռավը,- ինչպես ասում են,- վախկոտ է լինում». հայերն էլ հակված են կարծելու, որ համիդիե գործակոչի պատճառը ռուսների ներս խուժելու սարսափը չէ («միևնույն է. նրանք չեն կարող ռուսների հետ պատերազմել, այդ հորդան փախուստ կտա չաղալների երամակի նման, թնդանոթի առաջին իսկ հարվածից», միամտորեն ասում են նրանք), այլ այն նպատակով, որպեսզի «մի անգամ ընդմիշտ վերջ տան հայկական հարցին»: Թուրքաց կառավարության ձեռք առած միջոցների այդ տեսակ բացատրությունը, ինձ թվում է, իհարկե, անհավանական, բայց մյուս կողմից, այն յուրաքանչյուր օրը, որ ես ապրում եմ «անհետացող Հայաստանում», համոզում է ինձ, որ Ռուսաստանի կամ որևէ մեկի միջամտությունը— բայց անհապաղ, վճռական, իրական ուժով ամրապնդված միջամտությունը— անհրաժեշտ է: Այն յուրաքանչյուր վերստ տարածությունը, որ ես անցնում եմ առաջ այդ դժբախտ երկրում, ամեն մի նոր գյուղ, ամեն մի նոր հանդիպումն համոզում են ինձ, ստիպում են ինձ բարձրաձայն դիմել ամբողջ քաղաքակիրթ հասարակությանը: Պարոննե՛ր, հասկացեք, վերջապես, որ այդ ժողովուրդը գտնվում է աղետի նախօրյակում:

ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Վաղեմի համակրությունները դեպի Ռուսաստանը.— Դաշնակցականները.— Ռուսական կուլտուրայի տարածողները.— Նրանց խաղը Թուրքիայի հետ և թեքումը դեպի Ռուսաստան.— Սրտաշարժ մանր դեպքեր:

Ճանապարհից ուղարկած իմ նամակներում ես հաճախ որոշակի ցույց եմ տվել այն հզոր և զուտ տարերային ձգողական ուժը դեպի Ռուսաստանը, որ իմ աչքին ընկավ ոչ միայն հայերի, այլև եղիդիների և նույնիսկ մուսուլման ազգաբնակության մի մասի մեջ: Այդ ձգողության գոյությունն հաստատեցին ինձ ինչպես Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերիեը, չափազանց ժողովրդական և սիրված տեղական հասարակությունից, նույնպես և նրա կոլեգ ֆրանսիական հյուպատոս Զարչեսկին և գերմանական ու ամերիկական միսիոներները: Հայերի կարծիքները, իրրև չահագրգռված անձանց, ես առաջ չեմ բերի:

Թուրքահայերի համակրանքը դեպի Ռուսաստանը բնական հետևանք է մեր ավանդական ազատագրական քաղաքականության Մերձավոր Արևելքում, որ առանձնապես ջերմ կերպով բռնկվեց Բեռլինի կոնգրեսից հետո:

1890-ական թվականների սկզբին, դաշնակցականների հայերի մեջ ուժեղապես զարգացած գործունեության ազդեցության ներքո, սկեպտիկականության մի խիստ հոսանք թափվեց այն համակրության զգացմունքների և հույսերի մեջ, որ ժողովուրդն ուներ Ռուսաստանի վրա: Այդ հոսանքը շուտով փոխվեց ժողովրդի ինտելիգենտ, ավելի ճիշտ ասած՝ քաղաքային խավերի մեջ հայտնի թշնամության: Ռուսական հեղափոխության տապալումը և նրան հետևող ռեակցիան թափեցին այդ հոսանքի մեջ նոր, թարմ ուժեր ի դեմս ռուսահայ էմիգրանտների, որոնք ստիպվեցին փախչել Պարսկաստան և մասամբ Թուրքիա: Սահմանադրության հռչակումը Կ. Պոլսում և երիտթուրքերի հայտնի «սեթևեթումը» հայերի հետ՝ ստիպեցին դաշնակցականների կուսակցության—կուսակցություն, որ չնայելով իր սոցիալ հեղափոխության՝ խորապես ազգայնական է — ընկնել «Իթթիհադ վէ Թերաքքը» կոմիտետի լայն բացված գիրկը:

Ոչ այնքան իրողապես հավատալով, որքան ցանկանալով ու ձևացնելով՝ թե հավատացել են, հայ ժողովրդի ձախակողմյան խմբերը երիտթուրքերի հետ կազմեցին քաղաքական սերտ բլոկ, որի սուր ծայրն ուղղված էր Ռուսաստանի դեմ: «Դաշնակցականների ամենափոքր ցանկությունը կատարվում է «Իվնիոն» կոմիտետի կողմից միայն նրա համար, որ նրանք աղաղակում են իրանց ատելության մասին դեպի Ռուսաստանը»,- գրում էր այդ ժամանակ՝ ռուսական հյուպատոսներից մեկը Թուրքիայում: Դաշնակցականների ռուսատյաց այդ ավելի արհեստական (ես ցույց կտամ հետո, թե ինչու), քան իսկական զգացումները՝ բուն ժողովրդի մեջ, սակայն, արձագանք չէին գտնում. գյուղացիական զանգվածը, ինչպես և առաջ, շարունակում էր հավատալ և բնազդորեն սիրել Ռուսաստանը: Եվ նույնիսկ նոր հոսանքի ղեկավարների իրանց մեջ՝ թշնամությունը դեպի Ռուսաստանը զուտ ուղեղային էր, արտաքին, առաջ եկած՝ բացառապես քաղաքական հաշիվներով. նրանք ամենքը դուրս են եկել Ռուսաստանից, կրթվել են ռուսական դպրոցներում, ռուսական դրականությամբ և չեն ընդհատել Ռուսաստանի հետ ոչ միայն ազգակցական, այլև կուլտուրական կապերը: Բացի դրանից՝ օսմանյան ազատության տոնախմբությունը շատ շուտով փոխվեց լի օրերի, հետո նաև սուդի: Փառավոր և վառվռուն

հույսերի ու ակնկալությունների կարճատև լուսավառությունից հետո վչեց ջախջախված և խաբված իլյուզիաների դառն հոգմը:

Անխնա տապալումը դաշնակցականների քաղաքականության, որ կամենում էր կապել հայ ժողովրդի բախտը Թուրքիայի հետ, ավելի ևս ամրացրեց հայ ժողովրդական մասսաների մեջ այն համոզումը, թե «արտաքո Ռուսաստանի՝ չիք փրկություն հայոց», և այդ գիտակցությունը 1910 թվի վերջերն այնպիսի հաստատ և ամուր ձև ստացավ, որ ձախակողմյան ինտելիգենտ խմբերը, վախենալով թե կկորցնեն ժողովրդի վրա իրանց ունեցած ազդեցության վերջին մնացորդները, սաիպված էին վերադառնալ ռուսասիրության այն պատմական հունը, որից նրանք մի քանի տարի առաջ դուրս էին եկել այնպիսի աղմուկով: Միայն այդ հանգամանքով կարելի է բացատրել այն տարօրինակ փաստը, որ ռուս գորքերի Պարսկաստան մտնելուց հետո այդտեղից Թուրքիա փախած դաշնակցականները օսմ. երկրում հանդիսացան ոչ թե զայրացած հակառակորդներ (ինչպես պետք էր սպասել), այլ ընդհակառակը՝ եռանդուն և գործունյա տարածողներ ռուսական կուլտուրայի և ազդեցության: Դաշնակցական էմիգրանտներին է պարտական ռուսական առևտուրը այն արագ աջողությունների համար, որ նա ձեռք է բերել վերջին 2-3 տարին՝ Թուրքիայի հետ մեր սահմանակից երկիրներում. դաշնակցական էմիգրանտներին ենք պարտական, որ Թուրքահայերի մեջ վերջին ժամանակներս տարածվում են ռուսաց լեզուն և ռուսական կուլտուրան. դաշնակցական էմիգրանտները, որոնք գլուխ են կանգնած Վանում և Էրզրումում ծայրահեղ ձախակողմյան մամուլի օրգաններին, այժմ չիտակ և բարձրաձայն խոստովանում են իրանց սխալը և հայտնի, համարձակ ու կրքոտ կերպով քարոզում են, թե անհրաժեշտ է, որ հայ ազգը տա իր վստահությունը Ռուսաստանին և միայն ևեթ Ռուսաստանին:

Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերիևը հարկավոր է համարում ընդգծել այն փաստը, որ Վանում հրատարակվող «Աշխատանք» դաշնակցական լրագիրը վերջին երեք տարին մի խոսք անգամ չարտասանեց թշնամական՝ Ռուսաստանի վերաբերմամբ, թեև շատ խիստ կերպով հանդես է գալիս եվրոպական պետությունների և մանավանդ Թուրքիայի դեմ:

Հայ գյուղացիների դեպի Ռուսաստանը ունեցած սրտակցության գթաշարժ ու միամիտ օրինակներ հաղորդեց ինձ Օլֆերիևը:

Անցյալ ամառ՝ վիլայեթի գյուղերը մաղ գալիս նա հասավ Քիղզի գյուղը: Այստեղ նրան ցույց տվին մի զառամյալ և հոգեկան հիվանդ հայ ծերունու, որի ամբողջ հիվանդությունը այն է, որ 40 տարվա ընթացքում ամեն օր առավոտները դուրս է գալիս գյուղի ծայրը և նայում է դեպի հյուսիս. վերադառնալով ապա տուն՝ նա հառաչելով ասում է. «Ոչ, մոսկով քեռիները դեռ չեն գալիս»:

Մի ուրիշ օրինակ:

Հյուպատոսը երբ Հայկանետ գյուղումն էր, նրան մոտեցավ մի շատ աղքատ հայ գյուղացի և մեկնելով նրան ռուսական մի հին ռուբլի՝ ասաց. «Ես սրանից ավելի լավ բան չունեմ. ես տալիս եմ քեզ՝ ինչ որ ունեմ. վեր առ այս ռուբլին և միջնորդիր Ռուսաց Ցարի առաջ, որ ռուսները շուտով դան այստեղ»: